ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՇՄՆ-ԴՇ-22/09

ք.Երևան «31» «01» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Գ.Գուլյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրենի ժ/պ **Լ.Գալստյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն»** ծրագրային միջոցառման՝ բաժին 08, խումբ 02, դաս 02, ծրագիր 1186, միջոցառում 11001 (Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **42 303 100 (քառասուներկու միլիոն երեք հարյուր երեք հազար մեկ հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ի գումարը:

1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված №1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը, Պայմանագրի արդյունքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև երկկողմ ստորագրված և հաստատված փաստաթղթով՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ (Հավելված №3), նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված ժամկետում Կազմակերպությունը իրականացված միջոցառումների հաշվետվության հետ Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.7. Հանձնման-ընդունման արձանագրությունը Պետական մարմնի կողմից ստորագրվում է, եթե Պայմանագրի արդյունքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և հաստատվում: Նման դեպքում Պետական մարմինը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.8. Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի արդյունքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.9. Եթե Պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Պայմանագրի արդյունքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.8 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:

4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները՝

ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահամանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով

սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման և Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված իրականացման ենթակա միջոցառումների ժամկետը խախտելու, ինչպես նաև Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Կազմակերպությունից գանձվում է տույժ՝ իրականացման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պետական մարմինը Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից:

5.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8.4. Կազմակերպությունը մինչև 2023 թվականի հունվարի 31-ը Պետական մարմնին են ներկայացնում տեղեկատվություն 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական

բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

8.5. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը, 2-ը և 3-ը համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Տիգրան Մեծի 34
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007995	ՀՀ 900018002973
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02519651
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Գ.Գուլյան	**Լ.Գալստյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«31» «01» 2022թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-22/09 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ. Գուլյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի բնության պետական թանգարան»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Լ. Գալստյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
		Իրականացվելիք միջոցառման				
1	Հրատարակչական միջոցառումների իրականացում	Հայաստանի բնությանը վերաբերող տեղեկատվության տարածում բացիկների մշակում, տպագրում, հասարակության տարբեր խավերի իրազեկում, բնապահպանական քարոզչություն	Բնապահպանական թեմաներով բացիկների մշակում և տպագրում	Տպագրված 1000 բացիկների միջոցով տեղեկատվության տարածում և իրազեկված հասարակություն	30.12.2022թ.	75 000
2	Թանգարանային արժեքների համալրման, հաշվառման, պահպանման, ուսումնասիրման ախտահանման, վերականգնման միջոցառումների իրականացում	Ֆոնդային արժեքների համալրում, պահպանում, ուսումնասիրում				17 500 000
		Գործուղումների, գիտարշավների, գիտահետազոտական ինստիտուտների, Երևանի կենդանաբանական այգու, ինչպես նաև անհատների կողմից նվիրաբերած բնական նյութերով. << կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներով և օգտակար հանածոներով ֆոնդերի համալրում	Հիմնական ֆոնդի համալրում նոր ցուցանմուշներով յուրաքանչյուր եռամսյակում 5-ական ցուցանմուշ (<< կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ և օգտակար հանածոներ)	Համալրված 20 ցուցանմուշ	30.12.2022թ.	
		Թանգարանային ցուցանմուշ համարվելու նպատակով նմուշի (հումք) ուսումնասիրում, լուսանկարահանում, անձնագրավորում, քարտագրավորում և պիտակագրավորում	Ֆոնդային արժեքների ուսումնասիրում, լուսանկարահանում, անձնագրավորում, քարտագրավորում և պիտակագրավորում	Լուսանկարահանված, անձնագրավորված և քարտագրավորված 20 ցուցանմուշ	30.12.2022թ.	
		թանգարանի ֆոնդապահոցում Ֆոնդային արժեքների պահպանություն ցուցադրությունը պարբերաբար համալրելու, թարմացնելու նպատակով	Ֆոնդային արժեքների պահպանում թանգարանի տարածքում	Ֆոնդային ցուցանմուշների պահպանություն 6730 նմուշ	30.12.2022թ.	

		Միջատների դեմ պայքարող հատուկ քիմիական նյութերով հիմնական ֆոնդի ցուցանմուշների ախտահանում	Թանգարանի ֆոնդապահոցի ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում (4 անգամ)	պրոֆիլակտիկ ախտահանման շնորհիվ ֆոնդային արժեքների որակի պահպանում	30.12.2022թ.	
		Մաշկաքանդակագործական արհեստանոցում վնասված ցուցանմուշների վերանորոգման աշխատանքներ	Վերականգնողական միջոցառումների իրականացում	վերականգնված 20 ցուցանմուշ	30.12.2022թ.	
		Մշտական ցուցադրության համալրում նոր ցուցանմուշներով (<< կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ և օգտակար հանածոներ) հանրությանը իրազեկելու նպատակով	Մշտական ցուցադրության համալրում հիմնական ֆոնդի ցուցանմուշներով	համալրված 10 ցուցանմուշով	30.12.2022թ.	
		Թանգարանային ցուցանմուշների հաշվառում՝ վնասված ցուցանմուշների դուրս գրում և ոչնչացում	Թանգարանի հիմնական ֆոնդի հաշվառում	Բարձր որակի ֆոնդային արժեքներ	30.12.2022թ.	
		Համագործակցություն գիտահետազոտական ինստիտուտների հետ՝ ցուցանմուշների գիտական անվանումները պարբերաբար ստուգելու նպատակով	Թանգարանային ցուցանմուշների անվանումների պարբերաբար ճշտում համապատասխան մասնագետների հետ	ցուցանմուշների ճշգրտված գիտական անվանումներ	30.12.2022թ.	
		Գիտական անձնագրերում ցուցանմուշների լուսանկարների նորացման նպատակով ցուցանմուշների նոր լուսանկարահանված և մշակված լուսանկարների տպագրում	Գիտական անձնագրերում ցուցանմուշների լուսանկարների նորացում (հին լուսանկարների փոխարինումը նոր, որակյալ լուսանկարներով)	գիտական անձնագրերում ցուցանմուշների մշակված, որակյալ լուսանկարներ	30.12.2022թ.	
3	Գիտահավաքագրական միջոցառումների իրականացում	Ֆոնդերի համալրման և վերականգնման նպատակով նյութերի հավաքագրում, ուսումնասիրում	Ֆոնդերի համալրման համար • գիտարշավ, • գործուղում	2 հատ 2 հատ	30.12.2022թ.	700 000
4	Գրադարանի վարում	Թանգարանի գրադարանի կանոնակարգում և վարում	Գրքերի և ամսագրերի մշակում, վերականգնում, սպասարկում	Մշակված 70 գրադարանային գրքեր և ամսագրեր, վերականգնված 40 միավոր, ինչպես նաև սպասարկվող 25 աշխատակիցներ	30.12.2022թ.	1 400 000
5	Հանրահռչակման և հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցառումների իրականացում	Հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական քարոզչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում	Հանրահռչակման և հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցառումների իրականացում	Հասարակության բնապահպանական պատասխանատվության ապահովում	30.12.2022թ.	21 428 100
		Բնապահպանական թեմաներով միջոցառումների և ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպում	• Միջոցառումների կազմակերպում (5 հատ) • ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպում (9 հատ)	• Բնապահպանական թեմաներով միջոցառումներ, • ժամանակավոր ցուցահանդեսներ	30.12.2022թ.	
		Թանգարանի այցելուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն	• Այցելուների սպասարկում • էքսկուրսիաների կազմակերպում	• Սպասարկվող այցելուներ՝ 20150 • Կազմակերպվող էքսկուրսիաներ՝ 550	30.12.2022թ.	

		Գիտական տեղեկատվություն արդիականացում՝ մշակելով և տպագրելով ցուցանմուշների գիտական բացատրագրեր	Ցուցադրության և մասսայական միջոցառումների իրականացում (հայերեն, ռուսերեն)	Հանրային գիտաճանաչողության մակարդակի բարձրացում, 20 բացատրագիր	30.12.2022թ.	
		Մշտական ցուցադրությունում ներկայացվող ցուցանմուշների ախտահանում միջատների դեմ պայքարող հատուկ քիմիական նյութերով	Ցուցասրահներում ներկայացվող ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում (4 անգամ)	պրոֆիլակտիկ ախտահանման շնորհիվ մշտական ցուցադրությունում ներկայացված ֆոնդային արժեքների որակի պահպանում	30.12.2022թ.	
		Կենդանի ցուցադրությունում Հայաստանի և արևադարձային ակվարիումային ձկնատեսակների հանրությանը ներկայացում	Ձկնատեսակների ակվարիումային ցուցադրություն	Հայաստանի և արևադարձային ձկնատեսակների մասին իրազեկված հանրություն	30.12.2022թ.	
		Յուրաքանչյուր նոր համալրվող ձկնատեսակների համար պիտակների եռալեզու մշակում և տպագրում	Համալրվող ակվարումային ձկնատեսակների լուսանկարահանում, պիտակների տպագրում	Համալրված ձկնատեսակների եռալեզու մշակված և տպագրված պիտակներ	30.12.2022թ.	
		ՀՀ ԲՀՊՏ-ների մասին տեեկատվության տրամադրում տեղեկատվական տաղավարում տեղադրված նյութերի և էքսկուրսիաների միջոցով էկոտուրիզմի խթանում	էկոտուրիզմի զարգացմանն աջակցում	Թանգարանի այցելուները տեղեկացված են էկոտուրիզմի երթուղիների մասին	30.12.2022թ.	
		Անվտանգության ապահովում	Հակահրդեհային միջոցառումներ	Ապահովված անվտանգություն	30.12.2022թ.	
6	**ՇԻՐԱԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ** Թանգարանի այցուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն	Հայաստանի բնաշխարհի և «Արփի լճի» ազգային պարկի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, տարածում, գիտելիքների բազային ավելացում	• Այցելուների սպասարկում • Էքսկուրսիաների կազմակերպում	• Սպասարկվող այցելուներ՝ 550 • Կազմակերպվող էքսկուրսիաներ՝ 20	30.12.2022թ.	1 200 000
		Շիրակի մարզում բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական քարոզչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում	Միջոցառումների կազմակերպում • Բնապահպանի օր • Կենդանիների պաշտպանության միջազգային օր	2 միջոցառում	30.12.2022թ.	
			Ժամանակավոր ցուցահանդես • Բնությունը մանուկների աչքերով	1 ժամանակավոր ցուցահանդես	30.12.2022թ.	
		Մշտական ցուցադրությունում ներկայացվող ցուցանմուշների ախտահանում միջատների դեմ պայքարող հատուկ քիմիական նյութերով	Ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում (2 անգամ)	պրոֆիլակտիկ ախտահանման շնորհիվ մշտական ցուցադրությունում ներկայացված ֆոնդային արժեքների որակի պահպանում	30.12.2022թ.	
ԸՆԴԱՄԵՆԸ						**42 303 100**

Հավելված №2
«31» «01» 2022թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-22/09 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ.Գոլյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի բնության պետական թանգարան»
ՊՈԱԿ-ի տնօրենի մ/պ
Լ.Գալստյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները

Ծրագրի դասիչը՝	**1186**	**Ցուցանիշներ**			
Միջոցառման դասիչը՝	**11001**	**Առաջին եռամսյակ**	**Առաջին կիսամյակ**	**Ինն ամիս**	**Տարի**
Միջոցառման անվանումը՝	Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն				
Նկարագրությունը՝	Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում				
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում				
Ծառայությունը մատուցող կազմակերպության անվանումը	Մասնագիտացված կազմակերպություն				
Արդյունքի չափորոշիչներ					
Թանգարանային ցուցանմուշների ուսումնասիրում, հաշվառում և պահպանում, ցուցանմուշների քանակ		6612	6617	6622	6730
Սպասարկվող այցելուների թվաքանակը, մարդ		2000	12000	13000	20700
Ժամանակավոր բնապահպանական ցուցահանդեսների կազմակերպում, ցուցահանդեսների քանակ		1	5	7	10
Բնապահպանական միջոցառումների կազմակերպում, միջոցառումների քանակ		0	3	4	5
Հրատարակչական աշխատանքներ՝ բնապահպանական թեմաներով բացիկների մշակում, տպագրում, օրինակ		0	0	1000	1000
Ցուցանմուշների պահման պայմանների համապատասխանությունը սահմանված նորմերին, տոկոս		82	82	82	82
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		**8 460.6**	**19 036.4**	**29 612.2**	**42 303.1**

Հավելված №3
«31» «01» 2022թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-22/09 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Տիգրան Մեծի 34
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007995	ՀՀ 900018002973
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02519651

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2022թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «31» «01» 2022թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԴՇ-22/09

Պետական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի և Կազմակերպությունը՝ ի դեմս «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Լ.Գալստյանի, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «_____» 2022 թվականից մինչև «___» «_____» 2022 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

№	Իրականացված միջոցառման						
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		քանակական կամ արդյունքային ցուցանիշները		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.